



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 12 (469) «29» ապրիլի 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ		
213	«Արցախի Հանրապետության Նախագահի 2022 թվականի հունվարի 31-ի ՆՀ-269-Ն հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-769-Ն հրամանագիրը.....	4
214	«Մասնակի զորահավաքը դադարեցնելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-778-Ն հրամանագիրը.....	5
ՑՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
215	«Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 342-Ն որոշումը.....	6
216	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 449-Ն որոշումը.....	15
217	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 450-Ն որոշումը.....	16
218	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 451-Ն որոշումը.....	17
219	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 452-Ն որոշումը.....	18
220	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 11-ի N 78 որոշումը վերացված ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 457-Ն որոշումը.....	19
221	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի N 152 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 458-Ն որոշումը.....	20
222	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 26-ի N 325 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 459-Ն որոշումը.....	21
223	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 26-ի N 650 որոշումը վերացված ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 460-Ն որոշումը.....	22
224	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 21-ի N 131-Ն որոշման մեջ փոփոխություններ	

	կատարելու մասին» ԱՀ կառավարության N 461-Ն որոշումը.....	23
225	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 27-ի N 253-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 462-Ն որոշումը.....	24
226	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 463-Ն որոշումը.....	25
227	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 797-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 464-Ն որոշումը.....	26
228	«Արցախի Հանրապետությունում անասնաբույժի և բույսերի առողջության պաշտպանի օրերը նշելու մասին» ԱՀ կառավարության N 470-Ն որոշումը.....	27
229	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի N 189, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի N 192, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի N 193, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 26-ի N 385 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 472-Ն որոշումը.....	28
230	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N 564 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 484-Ն որոշումը...	35
231	«Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 9-ի N 231-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 488-Ն որոշումը.....	36
ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
232	««Արմեն Խաչատուրյան Ալեքսանդրի» անհատ ձեռնարկատիրոջը տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ գյուղատնտեսության նախարարի N 71 հրամանը.....	37
233	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի և լիցենզիայի ներդիրի գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N ՆՀ-85-Ա հրամանը.....	38
234	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիայի գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 37-Ա հրամանը.....	39
ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ		

	ԿՈՂՄԻՑ ՎՃՈՍԲԵՎ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՅՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
235	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/0442/02/21 դրոշումը.....	40

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ՆՀ-269-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2022 թվականի հունվարի 31-ի «Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով ստեղծելու մասին» ՆՀ-269-Ն հրամանագրի 3-րդ կետի «եռամսյա ժամկետում» բառերը փոխարինել «մինչև 2022 թվականի հունիսի 1-ը» բառերով:

2. Մույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 27
Ստեփանակերտ
ՆՀ-769-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՄԱՍՆԱԿԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Դադարեցնել 2022 թվականի մարտի 25-ին հայտարարված մասնակի զորահավաքը:

2. Արցախի Հանրապետության կառավարությանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ապահովել սույն հրամանագրի կատարումը:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. ապրիլի 28
Ստեփանակերտ
ՆՀ-778-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 մարտի 2022թ.

N 342-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ը որոշում է.**

1. «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում և N 3 հավելվածում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 10-ի «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ և լրացումներ, NN 3 և 4 հավելվածների ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածում և Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 10-ի «Արցախի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածում՝

1) «ԱՀ Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարություն» բառերը փոխարինել «ԱՀ գյուղատնտեսության նախարարություն» բառերով.

2) «ԱՀ ֆինանսների նախարարություն» բառերը փոխարինել «ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն» բառերով.

3) «ԱՀ աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն» բառերը փոխարինել «ԱՀ սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարություն» բառերով.

4) «ԱՀ Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության, շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական ծառայություն» բառերը փոխարինել «ԱՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն» բառերով:

3. Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմին, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը, Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությանը, Արցախի Հանրապետության նյութական վնասների հարցերի կոմիտեին, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում Արցախի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը ներկայացնել սույն որոշման ընդունումից բխող՝ աշխատակազմերի նախահաշիվները եռամսյակային (աճողական) կտրվածքով՝ ըստ բյուջետային

ծախսերի տնտեսագիտական դասակարգման հողվածների, գնումների պլանները և (կամ) պլանների փոփոխությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ 1-ին կետի գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 11-ից հետո ծագած հարաբերությունների վրա, 2-րդ և 3-րդ կետերի գործողությունը՝ 2022 թվականի մարտի 11-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՄՄԵՐ այդ թվում՝	-	-	-	-
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՑԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	(211 830,0)	142 423,3	226 034,6	288 553,7
	1		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	(111 830,0)	112 153,2	164 847,1	189 964,8
		1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	-	57 927,0	92 259,9	99 735,0
		03	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	57 927,0	92 259,9	99 735,0
			ԱՀ Նախագահի աշխատակազմ	-	(18 738,5)	(53 095,6)	(95 046,6)
			ԱՀ Անվտանգության խորհրդի գրասենյակ	-	10 000,0	20 000,0	20 000,0
			ԱՀ պետական վերահսկողական ծառայություն	-	66 665,5	125 355,5	174 781,6
		2	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	(111 830,0)	54 226,2	72 587,2	90 229,8
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	33 170,0	54 226,2	72 587,2	90 229,8
			ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	33 170,0	54 226,2	72 587,2	90 229,8
		02	Ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների ձեռքբերում	(65 000,0)	-	-	-
			ԱՀ պետական եկամուտների կոմիտե	(65 000,0)	-	-	-
		05	Ավելացված արժեքի հարկի վերադարձ	(80 000,0)	-	-	-
			ԱՀ պետական եկամուտների կոմիտե	(80 000,0)	-	-	-
6			Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	30 270,1	61 187,5	98 588,9
		1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	30 270,1	61 187,5	98 588,9
		01	Գործադիր իշխանության,	-	30 270,1	61 187,5	98 588,9

			պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում				
			ԱՀ նյութական վնասների կրմիտե		30 270,1	61 187,5	98 588,9
7			Պետական պարտքի գծով գործառնություններ	(100 000,0)	-	-	-
	1		Պետական պարտքի գծով գործառնություններ	(100 000,0)	-	-	-
		02	Գանձապետական հասարակ մուրհակների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	(100 000,0)	-	-	-
			ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	(100 000,0)	-	-	-
02			ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	(210 000,0)	-	-	-
2			Քաղաքացիական պաշտպանություն	(210 000,0)	-	-	-
	1		Քաղաքացիական պաշտպանություն	(210 000,0)	-	-	-
		01	Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ	(210 000,0)	-	-	-
			ԱՀ կառավարություն	(210 000,0)	-	-	-
03			ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	(861 000,0)	11 600,0	6 600,0	-
	1		Հասարակական կարգ և անվտանգություն	(847 600,0)	-	-	-
		1	Ոստիկանություն	(147 600,0)	-	-	-
		01	Հասարակական կարգի պահպանության ապահովում	(100 000,0)	-	-	-
			ԱՀ ոստիկանություն	(100 000,0)	-	-	-
		02	Պետավտոհամարանիշերի, վարորդական իրավունքի վկայականների և տեխանձնագրերի ձեռքբերում	(47 600,0)	-	-	-
			ԱՀ ոստիկանություն	(47 600,0)	-	-	-
		2	Ազգային անվտանգություն	(700 000,0)	-	-	-
		01	Ազգային անվտանգության ապահովում	(700 000,0)	-	-	-
			ԱՀ ազգային անվտանգության ծառայություն	(700 000,0)	-	-	-
2			Փրկարար ծառայություն	(30 000,0)	-	-	-
	1		Փրկարար ծառայություն	(30 000,0)	-	-	-
		01	ԱՀ փրկարար ծառայության ապահովում	(30 000,0)	-	-	-
			ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայություն	(30 000,0)	-	-	-
3			Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն	16 600,0	11 600,0	6 600,0	-
	2		Իրավական պաշտպանություն	16 600,0	11 600,0	6 600,0	-
		01	Քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի և այլ պարտավորությունների հատուցման ենթակա ծախսեր	16 600,0	11 600,0	6 600,0	-
			ԱՀ կառավարություն	16 600,0	11 600,0	6 600,0	-
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1 127 066,4	504 824,3	176 659,6	(75 215,4)
	1		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	612 000,0	-	-	-
		1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	612 000,0	-	-	-

		01	Տնտեսական զարգացման ծրագրեր	-	-	-	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	(46 730,0)	(131 700,0)	(251 380,0)	(346 400,0)
			ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	46 730,0	131 700,0	251 380,0	346 400,0
		02	ԱՀ քնդերքի ուսումնասիրման ծրագիր	-	-	-	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	(6 000,0)	(24 000,0)	(42 000,0)	(60 000,0)
			ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	6 000,0	24 000,0	42 000,0	60 000,0
		04	Աջակցություն Արցախի ներդրումային հիմնադրամին	697 000,0	-	-	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	(162 000,0)	(1 662 000,0)	(2 662 000,0)	(2 662 000,0)
			ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	859 000,0	1 662 000,0	2 662 000,0	2 662 000,0
		08	Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցություն	(10 000,0)	-	-	-
			ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	(10 000,0)	-	-	-
		12	Տեխնիկական մասնագիտությունների կատարելագործման ծրագրեր	(75 000,0)	-	-	-
			ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	(75 000,0)	-	-	-
2			Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և ռուստրոլություն	515 066,4	504 824,3	176 659,6	(75 215,4)
	1		Գյուղատնտեսություն	515 066,4	504 824,3	176 659,6	(75 215,4)
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	(11 175,7)	(39 340,4)	(75 215,4)
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	(7 906,5)	(30 054,0)	(58 722,1)
			ԱՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	-	(3 269,2)	(9 286,4)	(16 493,3)
		04	Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում	(43 280,0)	-	-	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	(43 280,0)	-	-	-
		05	Պատվաստուկների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում	(67 653,6)	-	-	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	(67 653,6)	-	-	-
		10	Աջակցություն գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին	816 000,0	516 000,0	216 000,0	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	816 000,0	516 000,0	216 000,0	-
		11	Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր	(190 000,0)	-	-	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	(190 000,0)	-	-	-
3			Վառելիք և էներգետիկա	(56 600,0)	-	-	-
	5		Էլեկտրաէներգիա	(56 600,0)	-	-	-
		01	Էներգետիկ ոլորտի զարգաց-	(56 600,0)	-	-	-

			ման և սուբսիդավորման ծրագրեր				
			ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	(56 600,0)	-	-	-
7			Այլ բնագավառներ	-	-	-	-
	3		Զբոսաշրջություն	-	-	-	-
		01	ԱՀ զբոսաշրջության զարգացման ծրագիր	-	-	-	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	(3 750,0)	(23 800,0)	(30 950,0)	(33 500,0)
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	3 750,0	23 800,0	30 950,0	33 500,0
9			Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	56 600,0	-	-	-
	1		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	56 600,0	-	-	-
		04	Ընթացիկ նորոգման, բարելավման և կոմունալ տնտեսության գծով ԱՀ շրջանների կարողությունների զարգացման ծախսեր	56 600,0	-	-	-
			ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	171 600,0	300 000,0	430 000,0	491 314,6
			Ասկերանի շրջանի վարչակազմ	79 496,1	138 589,5	219 910,4	348 941,6
			Մարտակերտի շրջանի վարչակազմ	82 148,5	153 029,1	236 530,1	321 593,5
			Մարտունու շրջանի վարչակազմ	90 779,3	171 025,3	251 743,4	421 034,2
			Շահումյանի շրջանի վարչակազմ	7 500,0	19 000,0	41 700,0	73 000,0
			Շուշիի շրջանի վարչակազմ	16 526,1	46 981,1	94 466,1	118 466,1
			Քաջաթաղի շրջանի վարչակազմ	8 550,0	21 375,0	25 650,0	25 650,0
			ԱՀ կառավարություն	(400 000,0)	(850 000,0)	(1 300 000,0)	(1 800 000,0)
06			ԲՆԱԿԱՐԱՆԱՑՄԱՆ ՇԻՄԱՐՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	-
3			Զբամատակարարում	-	-	-	-
	1		Զբամատակարարում	-	-	-	-
		02	Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում	-	-	-	-
			ԱՀ ջրային կոմիտե	101 750,0	263 500,0	435 250,0	687 000,0
			Ստեփանակերտի քաղաքապետարան	28 250,0	56 500,0	84 750,0	113 000,0
			ԱՀ կառավարություն	(130 000,0)	(320 000,0)	(520 000,0)	(800 000,0)
07			ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	(347 666,4)	-	-	-
1			Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	(317 666,4)	-	-	-
	1		Դեղագործական ապրանքներ	(163 666,4)	-	-	-
		01	Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում	(163 666,4)	-	-	-
			ԱՀ առողջապահության նախարարություն	(163 666,4)	-	-	-
	3		Բժշկական սարքեր և սարքավորումներ	(154 000,0)	-	-	-
		01	Կենտրոնացված կարգով բժշկական սարքավորումների և պարագանների ձեռքբերում ու սպասարկում	(154 000,0)	-	-	-
			ԱՀ առողջապահության նախարարություն	(154 000,0)	-	-	-
4			Հանրային առողջապահական	(30 000,0)	-	-	-

			Ճառայություններ				
		1	Հանրային առողջապահական ծառայություններ	(30 000,0)	-	-	-
		06	COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	(30 000,0)	-	-	-
			ԱՀ առողջապահության նախարարություն	(30 000,0)	-	-	-
08			ՀԱՆՔԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	-	(3 995,0)	(5 392,0)	(6 600,0)
	3		Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ	-	(3 995,0)	(5 392,0)	(6 600,0)
		1	Հեռուստառադիոհաղորդումներ	-	(3 995,0)	(5 392,0)	(6 600,0)
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	(5 951,6)	(9 400,6)	(13 342,7)
			ԱՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	-	(5 951,6)	(9 400,6)	(13 342,7)
		02	Հեռուստատեսային և ռադիո ծառայություններ	-	1 956,6	4 008,6	6 742,7
			ԱՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	-	1 956,6	4 008,6	6 742,7
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	10 136,0	24 358,6	43 490,2
	8		Կրթություն (այլ դասերին չպատկանող)	-	10 136,0	24 358,6	43 490,2
		1	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	-	10 136,0	24 358,6	43 490,2
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	10 136,0	24 358,6	43 490,2
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	-	10 136,0	24 358,6	43 490,2
10			ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	(2 173 170,0)	(2 978 483,6)	(2 533 652,8)	(2 756 828,5)
	2		Ծերություն	(313 170,0)	300 000,0	450 000,0	-
		1	Ծերություն	(313 170,0)	300 000,0	450 000,0	-
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	(463 170,0)	-	-	-
			ԱՀ սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարություն	(463 170,0)	-	-	-
		07	Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին	150 000,0	300 000,0	450 000,0	-
			ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	150 000,0	300 000,0	450 000,0	-
	7		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	(1 860 000,0)	(3 278 483,6)	(2 983 652,8)	(2 756 828,5)
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	(1 860 000,0)	(3 278 483,6)	(2 983 652,8)	(2 756 828,5)
		06	2020 թվականի պատերազմական գործողությունների հետևանքով ծանր ֆինանսատնտեսական վիճակում հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարման և կրած վնասների պետական աջակցություն	(1 860 000,0)	(3 278 483,6)	(2 983 652,8)	(2 756 828,5)
			ԱՀ կադաստրի և պետական	(2 560 000,0)	(5 560 000,0)	(8 560 000,0)	(11 560

			գույքի կառավարման կոմիտե				000,0)
			ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	700 000,0	1 350 000,0	1 350 000,0	1 350 000,0
			ԱՀ նյութական վնասների հարցերի կոմիտե		931 516,4	4 226 347,2	7 453 171,5
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	2 676 600,0	2 313 495,0	2 105 392,0	2 506 600,0
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	3 000 000,0	2 503 995,0	2 105 392,0	2 506 600,0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	3 000 000,0	2 503 995,0	2 105 392,0	2 506 600,0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	3 000 000,0	2 503 995,0	2 105 392,0	2 506 600,0
			ԱՀ կառավարություն	3 000 000,0	2 503 995,0	2 105 392,0	2 506 600,0
	2		Այլ ծախսեր	(323 400,0)	(190 500,0)	-	-
		1	Այլ ծրագրեր	(323 400,0)	(190 500,0)	-	-
		02	Կապիտալ ներդրումներ	(500 000,0)	(200 000,0)	-	-
			ԱՀ պաշտպանության նախարարություն	-	100 000,0	260 000,0	390 000,0
			ԱՀ քաղաքաշինության նախարարություն	5 507 500,0	12 027 000,0	22 442 000,0	29 160 000,0
			Ստեփանակերտի քաղաքապետարան	192 500,0	368 000,0	560 000,0	750 000,0
			Ասկերանի շրջանի վարչակազմ	-	25 000,0	50 000,0	70 000,0
			Մարտակերտի շրջանի վարչակազմ	-	30 000,0	70 000,0	90 000,0
			Մարտունու շրջանի վարչակազմ	-	30 000,0	78 000,0	100 000,0
			Շահումյանի շրջանի վարչակազմ	-	10 000,0	20 000,0	20 000,0
			Շուշիի շրջանի վարչակազմ	-	10 000,0	20 000,0	20 000,0
			ԱՀ կառավարություն	(6 200 000,0)	(12 800 000,0)	(23 500 000,0)	(30 600 000,0)
		03	Հատուկ նպատակների ծախսեր	114 000,0	-	-	-
			ԱՀ կառավարություն	114 000,0	-	-	-
		04	Գույքի գնման ծախսեր	62 600,0	9 500,0	-	-
			ԱՀ կառավարություն	62 600,0	9 500,0	-	-

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի մարտի 30-ի N 342-Ն որոշման

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՍՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՒԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի
N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	(2 602 000,0)	-	-	-
այդ թվում՝				
Փոխառու գույք միջոցներ	(2 602 000,0)	-	-	-
1. Վարկերի և փոխառությունների ստացում	(2 602 000,0)	-	-	-
2. Ստացված վարկերի և փոխառությունների մարում	-	-	-	-

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 3
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի մարտի 30-ի N 342-Ն որոշման

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
10-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ N 4 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

ՀՀ	ԱՀ շրջանների և համայնքների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
2	Ասկերանի շրջան	-	-	-	-
	այդ թվում՝				
1	Ասկերան ք.	(1 619,0)	(543,1)	(299,1)	
18	Խրամորթ	1 239,0	-	-	-
33	Սառնաղբյուր	250,0	543,1	299,1	-
38	Վարդաձոր	130,0	-	-	-

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 ապրիլի 2022թ.

N 449-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ յ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ա. Առաքելյան փողոցի թիվ 14/10 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության 0,172885 հեկտար կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 ապրիլի 2022թ.

N 450-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քոասնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,17 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 ապրիլի 2022թ.

N 451-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ղ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 377 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Առաջաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող «ԲԵՅՁ ՄԵԹԸԼՍ» փակ բաժնետիրական ընկերության սեփականություն հանդիսացող՝ բնակավայրերի նպատակային նշանակության 0,3 հեկտար հասարակական կառուցապատման հողերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերության օբյեկտների հողերի:

2. Առաջարկել Առաջաձորի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 ապրիլի 2022թ.

N 452-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ը ը ը ը ը ը ը** է:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 644 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Կիչանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող «ԲԵՅՁ ՄԵԹԸԼՍ» փակ բաժնետիրական ընկերության սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 0,1 հեկտար հասարակական կառուցապատման հողերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերության օբյեկտների հողերի:

2. Առաջարկել Կիչանի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2022թ.

N 457-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 78
ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՑՎԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 44-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Վերացված ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 11-ի «ԼՂՀ արդարադատության պետական վարչության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից աճուրդի անցկացման կանոնակարգը հաստատելու մասին» N 78 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2004 թվականի ապրիլի 18-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2022թ.

N 458-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 152 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի «Հարկադիր կատարողին ներկայացվող մասնագիտական և առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին» N 152 որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում ««Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել ««Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի» բառերով.

2) որոշման 1-ին և 2-րդ կետերում՝

ա. «Հաստատել» բառը փոխարինել «Մահմանել» բառով,

բ. «դատական ակտերի» բառերը հանել.

3) որոշմամբ հաստատված N 1 և N 2 հավելվածներից հանել «դատական ակտերի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2022թ.

N 459-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի N 325 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ք ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 26-ի «Ծառայողական պարտականությունները կատարելիս հարկադիր կատարողի կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու պայմանները, ինչպես նաև անձնական օգտագործման տրանսպորտը ծառայողական նպատակներով օգտագործելու ծախսերի հատուցման կարգը սահմանելու մասին» N 325 որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում ««Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել ««Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի» բառերով.

2) որոշման 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2022թ.

N 460-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 650 ՈՐՈՇՈՒՄԸ
ՎԵՐԱՑՎԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 44-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ոքոչուվ է**:

1. Վերացված ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 26-ի «Հարկադիր կատարողների բազային պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին» N 650 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2014 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2022թ.

N 461-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 131-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 21-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հարկադիր կատարողի օրը նշելու մասին» N 131-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառով.

2) որոշման նախաբանը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«Արցախի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 24-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**».

3) որոշման 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2022թ.

N 462-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 253-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 27-ի «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» N 253-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման և որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրերում «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ» բառերը փոխարինել «ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ» բառերով.

2) որոշման նախաբանում «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել ««Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի» բառերով.

3) որոշման 1-ին կետի «դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողի» բառերը փոխարինել «հարկադիր կատարողի» բառերով.

4) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 1-ին կետի «դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողի (այսուհետ՝ հարկադիր կատարող)» բառերը փոխարինել «հարկադիր կատարողի» բառերով,

բ. 4-րդ կետի 1-ին ենթակետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2022թ.

N 463-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի «Պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումար սահմանելու մասին» N 71-Ն որոշման նախաբանում ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել ««Հարկադիր կատարման մասին» օրենքի» բառերով:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2022թ.

N 464-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 797-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 25-ի «Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը ձևավորելու և վարելու կարգը սահմանելու մասին» N 797-Ն որոշմամբ սահմանված հավելվածում՝

1) 3-րդ կետի «աշխատանքի, սոցիալական և միգրացիայի» բառերը փոխարինել «սոցիալական զարգացման և միգրացիայի» բառերով.

2) 10-րդ կետում «նախարարության» բառից հետո լրացնել «աշխատակազմի» բառը.

3) 14-րդ կետի 8-րդ և 21-րդ կետի 13-րդ ենթակետերից, 27-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությունից հանել «դատական ակտերի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2022թ.

N 470-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՄՆԱԲՈՒՅԺԻ ԵՎ
ԲՈՒՅՍԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԻ ՕՐԵՐԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 24-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ն շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետությունում անասնաբույժի օր նշել ապրիլի վերջին ուրբաթ օրը: Ապրիլի 24-ը ուրբաթ օրվա հետ համընկնելու դեպքում՝ Արցախի Հանրապետությունում անասնաբույժի օրը նշվում է ապրիլի վերջին հինգշաբթի օրը:

2. Արցախի Հանրապետությունում բույսերի առողջության պաշտպանի օր նշել մայիսի 12-ը:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 ապրիլի 2022թ.

N 472-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 189, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 192, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 193, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 385 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ** է:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 189 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում «ՍՏԵՂԾԵԼՈՒ», բառից հետո «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառով.

2) որոշման նախաբանում «օրենքի 11-րդ» բառերից առաջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել.

3) որոշման 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

4) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառով, իսկ թիվ 3 հավելվածի վերնագրում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերով.

5) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում՝
ա. բացառությամբ 11-րդ և 24-րդ կետերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

բ. 11-րդ և 24-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել,

գ. 15-րդ կետում «վարչապետը» բառը փոխարինել «կառավարությունը» բառով,

դ. 29-րդ և 30-րդ կետերում հանել «և առանձնացված ստորաբաժանումներ» բառերը՝ դրանց համապատասխան հոլովածներով.

6) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 192 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում «ՍՏԵՂԾԵԼՈՒ», բառից հետո «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառով.

2) որոշման նախաբանում «օրենքի 11-րդ» բառերից առաջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել:

3) որոշման 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

4) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՅԱՄԻ» բառով, իսկ թիվ 3 հավելվածի վերնագրում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով:

5) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում՝

ա. բացառությամբ 11-րդ և 24-րդ կետերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

բ. 11-րդ և 24-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել,

գ. 15-րդ կետում «վարչապետը» բառը փոխարինել «կառավարությունը» բառով,

դ. 29-րդ և 30-րդ կետերում հանել «և առանձնացված ստորաբաժանումներ» բառերը՝ դրանց համապատասխան հոլովածներով:

6) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 193 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1) որոշման վերնագրում «ստեղծելու» բառից հետո «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

2) որոշման նախաբանում «օրենքի 11-րդ» բառերից առաջ «ԼՂՀ» հապավումը հանել:

3) որոշման 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

4) որոշմամբ հաստատված թիվ 1 և թիվ 3 հավելվածների վերնագրերում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

5) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում՝

ա. բացառությամբ 11-րդ և 24-րդ կետերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

բ. 11-րդ և 24-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել,

գ. 15-րդ կետում «վարչապետը» բառը փոխարինել «կառավարությունը» բառով,

դ. 29-րդ և 30-րդ կետերում հանել «և առանձնացված ստորաբաժանումներ» բառերը՝ դրանց համապատասխան հոլովածներով:

6) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 26-ի ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 385 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

- 1) որոշման վերնագրում «ՍՏԵՂԾԵԼՈՒ» բառից հետո «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառով.
- 2) որոշման նախաբանում «օրենքի 11-րդ» բառերից առաջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել.
- 3) որոշման 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.
- 4) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառով, իսկ թիվ 3 հավելվածի վերնագրում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.
- 5) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում՝
 - ա. բացառությամբ 11-րդ և 24-րդ կետերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,
 - բ. 11-րդ և 24-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել,
 - գ. 15-րդ կետում «վարչապետը» բառը փոխարինել «կառավարությունը» բառով,
 - դ. 30-րդ կետում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.
- 6) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 4 հավելվածի:
 5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի ապրիլի 27-ի N 472-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության 2004թ.
«27» ապրիլի թիվ 189 որոշման

Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Բաժիններ

Քարտուղարության և տեխսպասարկման բաժին
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բաժին
Ֆինանսա-տնտեսական բաժին
Քաղաքաշինության, ճարտարապետության և գյուղատնտեսության բաժին»:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի ապրիլի 27-ի N 472-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության 2004թ.
ապրիլի 27-ի թիվ 192 որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՑԱՆԻ ՇՐՋԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Բաժիններ

Քարտուղարության և տեխսպասարկման բաժին
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բաժին
Ֆինանսա-տնտեսական բաժին
Քաղաքաշինության, ճարտարապետության և գյուղատնտեսության բաժին»:

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 3
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի ապրիլի 27-ի N 472-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության
«27» ապրիլի 2004թ. թիվ 193 որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Բաժիններ

Քարտուղարության և տեխսպասարկման բաժին
Կրթության, զիտության, մշակույթի և սպորտի բաժին
Ֆինանսա-տնտեսական բաժին
Քաղաքաշինության, ճարտարապետության և գյուղատնտեսության բաժին»:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 4
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի ապրիլի 27-ի N 472-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության
2004թ. հոկտեմբերի 26-ի թիվ 385 որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Մ Ք
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Բաժիններ

Քարտուղարության և տեխսպասարկման բաժին
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բաժին
Ֆինանսա-տնտեսական բաժին
Քաղաքաշինության, գյուղատնտեսության և վերաբնակեցման բաժին»:

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2022թ.

N 484-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 564 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ս շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի «Հարկադիր կատարողների վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» N 564 որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում ««Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել ««Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի» բառերով.

2) որոշմամբ սահմանված հավելվածի՝

ա. 1-ին և 7-րդ կետերում ««Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» բառերը փոխարինել ««Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի» բառերով.

բ. 2-րդ, 4-րդ և 9-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

գ. 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության համակարգում գործող Արցախի Հանրապետության» բառերով.

դ. 9-րդ և 11-րդ կետերից հանել «դատական ակտերի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2022թ.

N 488-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N 231-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 9-ի «Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 231-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 39-րդ կետից հանել «վարչություններ,» բառը և կետադրական նշանը.

2) Որոշմամբ հաստատված N 2 հավելվածի.

ա. 1-ին կետում «վարչություն» բառը փոխարինել «բաժին» բառով,

բ. 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«9. Ֆինանսատնտեսական բաժին»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

29 ապրիլի 2022թ.

N 71

ք. Ստեփանակերտ

«ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՈՒԲՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 22-րդ հոդվածներով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 7-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի լիցենզավորման հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 28-ի N 02 եզրակացությունն ու «ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՈՒԲՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2022 թվականի ապրիլի 25-ին ներկայացրած դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2008 թվականի ապրիլի 04-ին «ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՈՒԲՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» անհատ ձեռնարկատիրոջը տրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի N 000008 լիցենզիան (այսուհետ՝ լիցենզիա):

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին ապահովել՝

1) լիցենզիայի գործողության դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) սույն հրամանի առաքումն Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Նորայր Մուսայելյան

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

28 ապրիլի 2022թ.

ՆՀ-85-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ
ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 28-ի N 390-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. **Դադարեցնել՝ անհատ ձեռնարկատեր Հենրիխ Ալեքսանդրի Մովսեսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՆ00380 լիցենզիայի և լիցենզիայի N00003 ներդիրի գործողությունները:

2. Ենթոյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Հայկ Խանումյան

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

22 ապրիլի 2022թ.

N 37-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍԱՄԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 21.04.2022թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Ներքոնշյալ ընկերությանը տրամադրել լիցենզիա՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Գործունեության տեսակը
1	«ԲԱԶ ՍՏՐՈՅ» ՍՊԸ ք. Ստեփ., Տիգրան Մեծ 1 փակ., շենք 4/18	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԱՐԳՍՅԱՆ

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի մարտի 18-ի որոշմամբ հայցադիմումը վարույթ է ընդունվել և հարուցվել քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի ապրիլի 01-ի որոշմամբ գործով հրավիրվել է նախնական դատական նիստ:

Հայցվորի ներկայացուցիչ Ա.Հովհաննիսյանը 2021 թվականի հուլիսի 19-ին ներկայացրել է միջնորդություն, խնդրելով փոխել հայցի առարկան, այն է՝ «վերականգնել նախկին հաստիքում, իսկ դրա անհնարինության դեպքում աշխատանքում չվերականգնելու դիմաց բռնագանձել միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով հատուցման գումար» պահանջը փոխարինել «Պատասխանողից հոգուտ Հայցվորի բռնագանձել հարկադիր պարապուրդի գումարը, վերականգնել նախկին հաստիքում, իսկ դրա անհնարինության դեպքում պարտավորեցնել գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը» պահանջով:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ գործը նշանակվել է դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի նոյեմբերի 04-ի վճռով հայցը բավարարվել է մասնակի:

Նշված վճռի դեմ 2021 թվականի դեկտեմբերի 03-ին վերաքննիչ բողոք է բերել Պատասխանողը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2021 թվականի դեկտեմբերի 08-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության:

Վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 10-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի նոյեմբերի 04-ի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել Առաջին ատյանի դատարան՝ Վերաքննիչ դատարանի իրավական վերլուծությունների և պատճառաբանությունների հաշվառմամբ, լրիվ ծավալով նոր քննության:

Նշված որոշման դեմ Հայցվորի ներկայացուցիչ Ա.Հովհաննիսյանը, փոստային ծառայության միջոցով, 2022 թվականի փետրվարի 09-ին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալու խնդրանքով:

Վճռաբեկ բողոքին կից բողոքաբերը ներկայացրել է բողոքի պատճենները դատավարության մասնակցին, ինչպես նաև Վերաքննիչ դատարան ուղարկված լինելը հավաստող անդորրագրերն ու վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը ներառող լազերային սկավառակը:

Գերագույն դատարանի 2022 թվականի մարտի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի գրավոր պատասխան է ներկայացրել Պատասխանողը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ ներկայացված վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի և 13-րդ հոդվածի, ԱՀ Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի և

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, գործի ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, ինչի արդյունքում թույլ է տվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքների նորմերի խախտումներ:

Դատավարական վերը շարադրված նորմերի խախտումները, իրենց հերթին, հանգեցրել են նյութական իրավունքի նորմերի խախտման, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը չի կիրառել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, 11-րդ, 38-րդ հոդվածները, 111-րդ հոդվածի 2-րդ մասը, 265-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնք պարտավոր էր կիրառել, կիրառել է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի կարգապահական իրավակարգավորումները, որոնք կապ չունեն սույն գործով վիճարկման առարկայի հետ:

Նշվածը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Պատասխանողի ներկայացուցիչը Առաջին ատյանի դատարան է ներկայացրել հրամանի քաղվածքի հանձնման մատյանը, որտեղ նշված է, որ քաղվածքը Հայցվորին է հանձնվել 2021 թվականի փետրվարի 22-ին: Դատական նիստերի ձայնագրությունները ևս ապացուցում են, որ Պատասխանողի ներկայացուցիչը ընդունում է, որ վիճարկվող անհատական իրավական ակտը Հայցվորը ստացել է 2021 թվականի փետրվարի 22-ին: Փաստորեն, Հայցվորը վիճարկվող հրամանի քաղվածքը ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում դիմել է դատարան, և գործը վարույթ է ընդունվել: Այսինքն, չի վիճարկվում հայցադիմումը վարույթ ընդունելու իրավաչափությունը, այլ Պատասխանողը վիճարկում է հայցային վաղեմության կիրառման հարցը, որը սույն դեպքում վերաբերելի չէ, բացի այդ, ոչ մի ժամկետ չի խախտվել, քանի որ ժամկետները պետք է հաշվարկել ստացման օրվանից սկսած, իսկ իրազեկումը դեռևս պատշաճ չի համարվում այն դեպքում, երբ չի հանձնվել հրամանը:

Անհիմն է Վերաքննիչ դատարանի այն պնդումը, թե ստորադաս դատարանը թույլ է տվել սխալ առ այն, որ Հայցվորին աշխատանքում չվերականգնելու դիմաց պետք է տրամադրել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, քանի որ վճիռը կայացվել է 04.11.2021թ. և այն ուժի մեջ պետք է մտներ մեկ ամիս անց:

Սույն գործով Պատասխանողը վերաքննիչ բողոքում նշել է, որ Հայցվորը բաց է թողել դատարան դիմելու ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երկամսյա ժամկետը և որպես բաց թողնման հիմք նշում է Հայցվորին բանավոր իրազեկելու հանգամանքը, մինչդեռ, ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը հստակ նշում է, որ վիճարկվող հրամանը ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, աշխատողն իրավունք ունի դիմելու դատարան: Վերաքննիչ դատարանը գտել է, որ դատարան դիմելու իրավունքը ծագում է իրազեկման պահից և իրազեկումը նույնացրել է ստանալուն (օրինակ՝ իրազեկում կարող է լինել բանավոր հայտարարությունը, սակայն դա աշխատողին կզրկի խախտված իրավունքները պաշտպանելու հնարավորությունից, քանի որ աշխատողը հրամանի բովանդակությանը ծանոթանալուց հետո է կառուցում իր հայցապահանջը):

Պատասխանողի այն դիրքորոշումը, որ Հայցվորը 10.11.2020-30.12.2020 թվականը (հիսուն օրացուցային օր) չի ներկայացրել ընկերություն և/կամ իր նոր հասցեն ընկերությանը չի հայտնել և չի ժխտում այդ փաստը, վիճարկվող հրամանի հիմքում դրված չի եղել, քանի որ աշխատանքի չներկայանալու հանգամանքները կարգապահական վարույթով են լուծվում, որը հայցի սահմաններից դուրս է եղել, ուստի սույն դեպքում քննության առարկա պետք

է դառնան հրամանը և հրամանի հիմքում ընկած ապացույցները, այլ ոչ թե նոր վկայակոչած փաստերը և այլ ապացույցները, որոնք որևէ կապ չունեն վիճելի հրամանի ընդունման և սույն գործով հայցապահանջի հետ: Ավելին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայցվորի նկատմամբ չկա կարգապահական տույժ՝ աշխատանքի չներկայանալու համար և Պատասխանողն ընդունում է, որ այդ օրերի համար վճարել է աշխատավարձ, ուստի պետք է ելնել այն կանխավարկածից, որ աշխատանքային հարաբերությունները շարունակվել են մինչև ազատման հրամանն ընդունելը, իսկ պատերազմական իրավիճակը վերաբերելի չէ սույն աշխատանքային հարաբերությունների դադարեցման հարցում:

Ըստ բողոքաբերի՝ Պատասխանողի այն դիրքորոշումը, թե Հայցվորի անձնագրում և անձնական գործում նշված հասցեով փոստային կապի օպերատորն առաքման ծառայություններ չէր իրականացնում, նույնպես հիմնավորված չէ, քանի որ բացակայում է աշխատանքի չներկայանալու հիմքով Հայցվորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին հրամանը, ինչը նշանակում է, որ Հայցվորը գտնվել է նորմալ աշխատանքային հարաբերություններում և տվյալ դեպքում խոչընդոտների մասին խոսելն առարկայազուրկ է: Ավելին, Հայցվորի զբաղեցրած հաստիքի կրճատումը տեղի է ունեցել 21.07.2021 թվականին, այսինքն, Պատասխանողը աշխատանքային հարաբերությունները շարունակելու ռեալ հնարավորություն է ունեցել:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճարել բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի ԸԲԴ/0442/02/21 քաղաքացիական գործով 2022 թվականի հունվարի 10-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի նոյեմբերի 04-ի վճռին:

3. Վճարել բողոքի պատասխանի էությունը

Հայցվորն աշխատանքից ազատվել է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի վկայակոչմամբ և համապատասխան փաստական հիմքի նշումով, քանի որ Արցախից և աշխատանքից անհարգելի բացակայող աշխատողի նոր հասցեն անհայտ լինելու դեպքում հնարավոր չէր ապահովել կարգապահական վարույթի իրականացման բոլոր պահանջները, ինչպես նաև գործատուն՝ բացակայող աշխատողների շահերից ելնելով, ցանկացել է ազատման ավելի մեղմ հոդված նշել:

Դատական երկու ատյաններում Պատասխանողը հայտարարել է, որ համարում է Պայմանագիրն անորոշ ժամկետով կնքված: Նման հայտարարություն կատարվել է, քանի որ Պայմանագրի բնօրինակները պատասխանող ընկերության վարչական շենքի հրթիռակոծությունից հետո և մինչև տարածքի մաքրումը, անվտանգության նկատառումներից ելնելով հնարավոր չէր գտնել ու հանել, ուստի, կասկած կար, որ Պայմանագրի 5.2-րդ կետը կարող է փոխված լինել և Հայցվորի կատարած աշխատանքը լինել մշտական, այլ ոչ թե՛ ժամանակավորապես: Շենքի տարածքը մաքրելուց, փաստաթղթերի բնօրինակները հանելուց և ուսումնասիրելուց հետո պարզվել է, որ Հայցվորի հետ կնքված Պայմանագրի 5.2-րդ կետը մնացել է անփոփոխ, ընդհուպ՝ մինչև 01.01.2021թ. Հայցվորը համարվում էր ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող, իսկ դա նշանակում է, որ հրամանի ազատման հիմք նշված ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածը կիրառելի է: Ավելին, հոդվածի 2-րդ մասում ծանուցման համար նախատեսված ժամկետները չեն կիրառվում այն աշխատողների նկատմամբ, որոնք աշխատանքի են ընդունվել բացակայող աշխատողի փոխարեն:

Ինչ վերաբերում է հրամանը ստանալու ժամկետին, ապա օրենսդիրը կարևորում է աշխատողին աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին

իրազեկելը, այլ ոչ թե բուն ստացման ձևը կամ եղանակը: Քանի որ Հայցվորն անձամբ 08.01.2021թ. ներկայացել է պատասխանող ընկերություն, անձնակազմի կառավարման և գործավարության վարչության յոթ աշխատակցի ներկայությամբ ծանոթացել ազատման հիմքերին և անմիջապես հեռացել, միտումնավոր չվերցնելով փաստաթղթերը, ապա նույն փաստաթղթերը նրան այլ եղանակով հասցնելու անհրաժեշտությունը վերացել է:

Ըստ պատասխանի հեղինակի՝ 50 օր անհարգելի բացակայության հետևանքով ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի և Պայմանագրի մի շարք դրույթներ խախտած, պարապուրդ նախաձեռնած աշխատողը ոչ մի կոնվենցիայով, օրենքով և/կամ այլ իրավական ակտով չի կարող դատարանից պահանջել գործատուին պատասխանատվության ենթարկել և նրանից գանձել հարկադիր պարապուրդի դիմաց հատուցում կամ աշխատանքի չվերականգնվելու դիմաց հատուցում: Սույն աշխատանքային վեճի սուբյեկտների միջև հարաբերությունները դադարեցվել են հենց աշխատողի նախաձեռնությամբ, սակայն Առաջին ատյանի դատարանը չի բացահայտել օբյեկտիվ իրականությունը և անհիմն գանձել է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով չնախատեսված չափով հատուցում:

Նշվածների հաշվառմամբ պատասխանի հեղինակը խնդրել է մերժել ներկայացված վճռաբեկ բողոքը:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հայցվորը վիճարկել է Պատասխանողի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 206-5 անհատական իրավական ակտը: Վերջինս ունի հետևյալ ձևակերպումը. «... Հաշվի առնելով այն փաստը, որ Արցախի Հանրապետությունում Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով Քաշաթաղի, Շահումյանի, Հադրութի և Շուշիի շրջանները անցել են Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ և նշված շրջաններում գտնվող «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ-ի մասնաճյուղերի՝ սույն հրամանի հավելվածում նշված աշխատողները փաստացի չեն ներկայացել աշխատանքի 10.11.2020-30.12.2020թ. ժամանակահատվածում, նրանց գտնվելու վայրը անհայտ լինելու պատճառով հնարավոր չէ աշխատանքային հարաբերությունները շարունակելու վերաբերյալ բանակցելը կամ աշխատանքից ազատելու մասին ծանուցելը, ի շահ աշխատողների, և հիմք ընդունելով Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածը՝ ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ Քաշաթաղի, Շահումյանի, Հադրութի և Շուշիի շրջանների /Քաշաթաղ, Դիզակ, Շուշի մասնաճյուղ, Շահումյանի ցանց/ սույն հավելվածում նշված աշխատողներին՝

- վճարել դեկտեմբեր ամսվա դիմաց ԱՀ նվազագույն աշխատավարձի չափով.

- ազատել աշխատանքից 01.01.2021թ.-ից...»:

2) Հայցվորի աշխատանքի չներկայանալու ենթադրյալ փաստով Պատասխանողի կողմից որևէ վարույթ չի իրականացվել, Հայցվորից բացատրություն չի պահանջվել և նրա նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ որոշում չի ընդունվել:

3) Դիմելով Առաջին ատյանի դատարան՝ Հայցվորը խնդրել է անորոշ ժամկետով կնքված համարել կողմերի միջև 07.06.2018թ. կնքված թիվ 6-118 որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը, անվավեր ճանաչել Պատասխանողի կողմից կայացված անհատական իրավական ակտը, իրեն վերականգնել աշխատանքում և հոգուտ իրեն գանձել հարկադիր

պարապուրդի գումարը, իսկ վերականգնման անհնարինության դեպքում՝ հատուցման գումարը միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

4) 2021 թվականի հուլիսի 19-ին Հայցվորի ներկայացուցիչն Առաջին ատյանի դատարան է ներկայացրել միջնորդություն՝ հայցի առարկան փոփոխելու մասին, որը 2021 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ բավարարվել է. «վերականգնման անհնարինության դեպքում՝ հատուցման գումարը միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով գանձելու» Հայցվորի պահանջը փոխարինվել է «վերականգնման անհնարինության դեպքում գործատուին պարտավորեցնել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը» պահանջով:

5) Պատասխանողի և Հայցվորի միջև թիվ 6-118 աշխատանքային պայմանագիրը կնքվել է 2018 թվականի հունիսի 07-ին: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Հայցվորն ընդունվել է աշխատանքի պատասխանող ընկերության «Քաշաթաղ» մասնաձյուղի իրացման բաժնում, որպես՝ օպերատոր: Պայմանագրի 5.2 կետով սահմանվել է դրա գործողության ժամկետը, այն է. « ... կնքվում է 2018 թվականի հունիսի 11-ից և գործում հիմնական աշխատողի նպատակային արձակուրդի ժամանակահատվածում»:

6) 2018 թվականի սեպտեմբերի 13-ին Պատասխանողի և Հայցվորի միջև կնքվել է Պայմանագրի 1.2, 1.3 և 4.1 ենթակետերը «2018 թվականի մայիսի 05-ից» նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ թիվ 1 լրացուցիչ համաձայնագիրը: Հայցվորը վերանշանակվել է «Քաշաթաղ» մասնաձյուղի իրացման բաժնում որպես՝ ԻԳ մասնագետ:

7) Պատասխանողի և Հայցվորի միջև 2018 թվականի դեկտեմբերի 28-ին և 2019 թվականի դեկտեմբերի 27-ին կնքվել են լրացուցիչ համաձայնագրեր, որոնցով փոփոխություններ են նախատեսվել Պայմանագրի 8.2 ենթակետում, այն համապատասխանաբար շարադրելով հետևյալ բովանդակությամբ. «Սույն համաձայնագիրը կնքվում է 2019 թվականի հունվարի 01-ից և գործում է ժամանակավոր մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը» և «Սույն համաձայնագիրը կնքվում է 2020 թվականի հունվարի 01-ից և գործում է ժամանակավոր մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը»:

8) Պայմանագրի 8.2 ենթակետը զետեղված է «Եզրափակիչ դրույթներ» վերտառությամբ 8-րդ կետի ներքո և մինչև փոփոխությունն ունենալ հետևյալ ձևակերպումը. «Բոլոր այն հարցերը, որոնք չեն ներառվել սույն պայմանագրում, կարգավորվում են օրենսդրությամբ սահմանված կարգով»:

9) Առաջին ատյանի դատարանը ներկայացված հայցադիմումը համարել է չորս առանձին պահանջներից կազմված: Կայացված վճռի եզրափակիչ մասում հաստատված է համարվել կողմերի միջև կնքված աշխատանքային պայմանագրի անժամկետ բնույթը, Պատասխանողի կայացրած անհատական իրավական ակտը ճանաչվել է անվավեր, Հայցվորի օգտին գանձվել է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի գումարը՝ սկսած 2021 թվականի հունվարի 01-ից մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը, ինչպես նաև նույն ժամկետով և նույն չափով հատուցում՝ աշխատանքում չվերականգնելու դիմաց: Մերժվել է նախկին աշխատանքում վերականգնելու «պահանջ»-ը:

10) Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության, արձանագրելով, որ ստորադաս դատարանը գործի քննությունը չի իրականացրել վեճի ըստ էության լուծումը ենթադրող բոլոր ապացույցները ներկայացնելու հնարավորության ընձեռման և դրանք պատշաճ հետազոտման դատավարական նորմերի պահանջների շրջանակներում, ինչպես նաև սխալ է կիրառել աշխատողին աշխատանքի չվերականգնելու դեպքում հատուցում տրամադրելու նյութական նորմն ու հաշվի չի առել Պայմանագրի իրական

բնույթը, անհատական իրավական ակտը Հայցվորին հասանելի լինելու պահն ու առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայացած աշխատողի հետ կնքված պայմանագիրը լուծելու գործատուի իրավունքի օրենսդրական կարգավորումները:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել և որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են:

«Հայաստանի Հանրապետության 2004 թվականի աշխատանքային օրենսգիրքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի ուժով՝ 2005թ. հուլիսի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ է դրվել 2004թ. նոյեմբերի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը (դրա հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ), այն վերանվանելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք»-ի:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն. «1. Սույն օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

2. Աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով»:

Նույն օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Արցախի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավոր-

վում են ԱՀ Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Քաղաքացիական գործ հարուցելու հիմքը» վերտառությամբ 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

Նշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ քաղաքացիական դատավարությունում հայցվորն ինքն է հայցադիմումը ձևակերպում և ցույց տալիս հայցի առարկան, հայցի հիմքը, հայցի կողմերը: Միննույն ժամանակ, հայցվորի կողմից իր նյութական և դատավարական իրավունքների տնօրինումը բացարձակ բնույթ չի կրում, այն կարող է իրականացվել միայն օրենքի շրջանակներում՝ դատարանի վերահսկողությամբ:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանություն հայցող կողմի դատարան ներկայացված հայցն անհատականացվում է իր երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Հայցի առարկան այն նյութաիրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում: Ակնհայտ է, որ կողմերի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը ժամկետային կամ անժամկետ համարելը որևէ կերպ չի կարելի դիտարկել պատասխանողի դեմ ուղղված նյութաիրավական պահանջի համատեքստում: Ըստ այդմ, դատարանը ոչ թե ճանաչում է կողմերի միջև կնքված պայմանագրի առկայությունը կամ հավաստում, որ դրանով իրավունքներ և պարտականություններ են առաջացել, փոփոխվել կամ դադարել, այլ հաստատում է այն փաստը, որ գոյություն ունեցող և իրավաչափ պայմանագիրը հանդիսանում է անորոշ կամ որոշակի ժամկետով կնքված, հետևաբար՝ նրա նկատմամբ կիրառելի են համապատասխան աշխատանքային պայմանագրերի կարգավորմանն ուղղված իրավանորմերը:

Գերագույն դատարանն ԸԲԴ/1603/02/18 քաղաքացիական գործով 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ արձանագրել է, որ հայցի հիմքը, որպես հայցի բովանդակության տարր, հայցը բնութագրում է այն տեսանկյունից, թե ինչ իրավաբանական փաստերի հիման վրա է հայցվորը խնդրում պաշտպանել իր նյութաիրավական պահանջը: Այդ իրավաբանական փաստերն էլ հենց հանդիսանում են հայցի հիմքը: Դատարանը կաշկանդված չէ հայցվորի հայտարարած փաստերի իրավական որակմամբ և պարտավոր է իրավական գնահատական տալ, իրավաբանորեն որակել հենց հայցվորի ցույց տված իրավաբանական փաստերը: Ընդ որում, ի տարբերություն հայցի հիմքի իրավաբանական փաստերի, հայցի իրավական հիմնավորումը հայցվորի կողմից կարող է փոփոխվել վարույթի բոլոր փուլերում, այդ թվում՝ դատաքննության ժամանակ, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ վերանայման ընթացքում: Քաղաքացիական գործի քննության և լուծման համար անհրաժեշտ իրավական նորմերը որոշելը և կիրառելը դատարանի պարտականությունն է: Դատարանը բոլոր դեպքերում դատական քննության ենթակա վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմերը ընտրում և կիրառում է՝ ելնելով հայցի հիմքում ընկած իրավաբանական փաստերից, այլ ոչ թե հայցվորի վկայակոչած իրավական նորմերից (որոնք կարող են նույնիսկ ոչ ճիշտ վկայակոչված լինել):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Դոդովն ընդդեմ Բուլղարիայի գործով իր 17.01.2008թ. վճռում նշել է, որ «քաղաքացիական դատավարությունում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ դատարանները

քննության են առնում և որոշում իրենց ներկայացված հայցերի իրավական բնութագիրը՝ առանց հաշվի առնելու հայցվորի առաջարկած իրավական բնութագիրը: Հայցվորը պետք է ներկայացնի վիճելի հարցը՝ հստակեցնելով փաստերը և իր հայցապահանջը, սակայն նա չի կրում որևէ պարտականություն՝ հստակեցնելու դրա բնութագիրն իրավունքում: Եթե նույնիսկ հայցվորը նշում է իր հայցի իրավական բնութագիրը, դատարանը կաշկանդված չէ դրանով: Դատարանը պետք է տա իր ինքնուրույն գնահատականը»:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով Հայցվորը ներկայացրել է իր խախտված աշխատանքային իրավունքների վերականգնման պահանջ:

Գերագույն դատարանն արդեն իսկ ԸԻԴ/0399/02/21 քաղաքացիական գործով 2022 թվականի հունվարի 12-ի որոշմամբ արձանագրել է, որ աշխատանքից ազատելու վերաբերյալ անհատական իրավական ակտի վիճարկման պահանջն իր մեջ ներառում է նաև նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի համար գումար գանձելու պահանջները, անկախ նրանից, թե վերջիններս փաստացի ներառված են հայցադիմումում, թե՛ ոչ: Նման դիրքորոշման Գերագույն դատարանը հանգել է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի վերլուծության արդյունքում: Այսպես՝

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

Գերագույն դատարանն ԸԻԴ/0163/02/18 քաղաքացիական գործով 2019 թվականի հունվարի 18-ի որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ օրենսդիրը ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է աշխատանքում չվերականգնելու գործատուի իրավական հնարավորություն՝

դատարանին վերապահելով այդ վարքագծի իրավաչափության գնահատման իրավասությունը, այն է՝ որոշել տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինությունը կոնկրետ գործի փաստերից ելնելով: Այսինքն՝

1. ոչ բոլոր դեպքերում է, որ առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքի պայմանները փոփոխելը, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելը կարող է հիմք հանդիսանալ աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու համար.

2. այդ կանոնից բացառություն է այն դեպքը, երբ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը դատարանին իրավունք է վերապահում անգամ վերը նշված խախտումների փաստը հաստատված համարելու պայմաններում աշխատողին չվերականգնել նախկին աշխատանքում, եթե դա անհնարին է նաև տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության պատճառներով: Այս դեպքում նախկին աշխատանքում վերականգնելու փոխարեն դատարանը գործատուին պարտավորեցնում է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում՝ նրա միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

Նշվածներից բխում է, որ աշխատանքից ազատելու վերաբերյալ անհատական իրավական ակտի վիճարկման պահանջի ընդգրկմամբ քաղաքացիաիրավական վեճերով դատարանի առաջնային խնդիրն է պարզել կայացված անհատական իրավական ակտի իրավաչափությունը:

Կայացված ակտի իրավաչափության վերաբերյալ դրական եզրահանգում անելու պարագայում, դատարանը մերժում է հայցադիմումը՝ այդ թվում նաև աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը գանձելու «պահանջներով» առանց վերջիններս որևէ կերպ քննության առնելու:

Հակառակ պարագայում, դատարանն անվավեր է ճանաչում աշխատողին աշխատանքից ազատելու վերաբերյալ անհատական իրավական ակտը, իսկ մյուս «պահանջների» առումով օրենսդրորեն սահմանափակված է հետևյալ երկու հնարավորությունների շրջանակներում՝

ա) կամ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ աշխատողին վերականգնել նախկին աշխատանքում և նրա օգտին գանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը,

բ) կամ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ, կոնկրետ՝ սահմանափակ դեպքերում աշխատողին չվերականգնել նախկին աշխատանքում, սակայն նրա օգտին գանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի չափով հատուցում, ինչպես նաև աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ մինչև միջին աշխատավարձի 12-ապատիկի չափով:

Անդրադառնալով գործատուի կայացրած անհատական իրավական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահին, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործատուի ընդունած ներքին և անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում այդ ակտի մասին համապատասխան անձանց պատշաճ կարգով

իրազեկելու պահից, եթե այդ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ: Աշխատանքի ընդունման, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուները, աշխատողները և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ: Աշխատանքային իրավունքների չարաշահումն արգելվում է:

Հետևաբար, դատարանները պետք է ուշադրություն դարձնեն ոչ միայն այն փաստին, թե կայացված անհատական իրավական ակտի փաստաթղթային տարբերակը երբ է հանձնվել դատավարության մասնակցին, այլ նաև նրան, թե արդյոք՝

ա) գործատուն օբյեկտիվորեն իրականացրել է կայացված ակտը հասցեատիրոջը հասանելի դարձնելու իր պարտականությունը,

բ) ակտի հասցեատերը այն ստանալու հարցում ցուցաբերել է բավարար բարեխիղճություն և ողջամտություն:

Նշվածները կարող են պարզվել միայն դատարան ներկայացված համապատասխան ապացույցների պատշաճ գնահատման միջոցով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

2. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

(...):

6. Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

(...):»:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

Գերագույն դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում՝ ապացույցների պատշաճ գնահատման համատեքստում, բացահայտել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտին առաջադրվող չափորոշիչները:

Այսպես՝ ԸԲԴ/0753/02/14 քաղաքացիական գործով Գերագույն դատարանը՝ 2015 թվականի հունիսի 23-ի որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «... գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից նշված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ (...): Դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետազոտված ապացույցներով: (...) յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման թե՛ իրավական և թե՛ փաստական հիմնավորումը: (...) Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառության մեջ, այն նորմի, որի հիման

վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: (...) դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է ներկայացված ապացույցը դրվում որոշման հիմքում, կամ՝ մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին»:

Ինչ վերաբերում է առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայացած աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները միակողմանի դադարեցնելու գործատուի իրավունքին, ապա Գերագույն դատարանն արդեն իսկ ԸԲԴ/0163/02/18 քաղաքացիական գործով 2019 թվականի հունվարի 18-ի որոշմամբ արձանագրել է, որ «...օրենսդիրը ցանկացած պարագայում առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայանալը դիտարկել է որպես գործատուի իր նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու եղանակով աշխատողի նկատմամբ կարգապահական խախտման համար պատասխանատվության տարատեսակ և այն չի կարող կիրառվել գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավահարաբերությունները կարգավորող նորմերի շրջանակներում»:

Զարգացնելով նշված դիրքորոշումը, Գերագույն դատարանը՝ ԸԲԴ/0399/02/21 քաղաքացիական գործով 2022 թվականի հունվարի 12-ի որոշմամբ արձանագրել է նաև հետևյալը.

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառնություններ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածը սահմանում է նաև, որ աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, կատարել աշխատանքի սահմանված նորմաները, պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, բարեխղճորեն վերաբերվել գործատուի և այլ աշխատողների գույքին, ինչպես նաև մարդկանց կյանքին ու առողջությանը, գործատուի գույքի պաշտպանությանն սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել գործատուին:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատողները պարտավոր են աշխատել սահմանված աշխատանքի (հերթափոխային) ժամանակացույցներին համապատասխան:

Այսինքն, օրենսդիրն աշխատողին պարտավորեցնում է աշխատանքային պարտականությունները կատարել օրինականության, բարեխղճության և ողջամտության սկզբունքների պահպանմամբ: Աշխատողն աշխատանքային պարտականությունները կատարում է ոչ թե ամբողջովին իր հայեցողությամբ, այլ պարտադիր կերպով ենթարկվելով աշխատանքային ռեժիմին, կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքային կարգապահությանը, աշխատանքի սահմանված նորմաներին: Ուստի, ցանկացած պարագայում, առանց հարգելի պատճառների աշխատանքի չներկայանալը

դասվում է աշխատողի աշխատանքային պարտականությունների չկատարման թվին:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն՝

1. Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

2. Աշխատանքային կարգապահության խախտում չեն համարվում.

1) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում այդ դեպքերով պայմանավորված՝ աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը.

2) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չպլանավորված տեղափոխման կամ չպլանավորված տրամադրման ժամանակահատվածում մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը:

Նշվածներից բխում է, որ աշխատողի աշխատանքի չներկայանալը կամ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքի ներկայանալը, անկասկած, հանդիսանում է աշխատանքային կարգապահության խախտում: Հետևաբար, դրա վերաբերյալ ծագող բոլոր իրավահարաբերությունները պետք է ընկած լինեն կարգապահական պատասխանատվության կիրառման գործող կարգավորումների շրջանակներում և, եթե գործատու-աշխատող հարաբերությունները կարգավորող հատուկ նորմերն այլ բան չեն սահմանում, կիրառման ենթակա են ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի՝ կարգապահական պատասխանատվությանն առնչվող ընդհանուր նորմերը:

5.1. Սույն որոշման հիմնավորումների կիրառումը գործի վերաբերյալ

Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության, արձանագրելով, որ ստորադաս դատարանը գործի քննությունը չի իրականացրել վեճի ըստ էության լուծումը ենթադրող բոլոր ապացույցները ներկայացնելու հնարավորության ընձեռման և դրանք պատշաճ հետազոտման դատավարական նորմերի պահանջների շրջանակներում, ինչպես նաև սխալ է կիրառել աշխատողին աշխատանքի չվերականգնելու դեպքում հատուցում տրամադրելու նյութական նորմն ու հաշվի չի առել Պայմանագրի իրական բնույթը, անհատական իրավական ակտը Հայցվորին հասանելի լինելու պահին ու առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայացած աշխատողի հետ կնքված պայմանագիրը լուծելու գործատուի իրավունքի օրենսդրական կարգավորումները:

Հաշվի առնելով սույն որոշմամբ բերված իրավական վերլուծությունները, Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները մասնակիորեն հիմնավոր են, քանի որ Առաջին ատյանի դատարանի ուշադրությունից դուրս են մնացել Պատասխանողի և Հայցվորի միջև կնքված Պայմանագրի 5.2 կետը, Պայմանագիրը փոփոխելու վերաբերյալ համաձայնագրերի իրական կարգավորումները, ինչպես նաև որևէ քննություն չի իրականացվել Հայցվորին աշխատանքից ազատելու վերաբերյալ անհատական իրավական ակտը Հայցվորին հասանելի դառնալու իրական պահը պարզելու ուղղությամբ: Ավելին, Առաջին ատյանի դատարանն անտեսել է այն փաստը, որ

Պատասխանողի կայացրած անհատական իրավական ակտով աշխատանքից ազատվել է ոչ միայն Հայցվորը, այլ նաև մի շարք այլ աշխատակիցներ: Իսկ վերջիններիս կողմից դատարան որևէ պահանջ ներկայացված չլինելու պայմաններում կայացված անհատական իրավական ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելը չի կարող իրավաչափ համարվել:

Նշվածների համատեքստում Գերագույն դատարանը վերանայվող դատական ակտում՝ այդ մասով, նյութական կամ դատավարական իրավունքների նորմերի խախտում չի արձանագրում:

Գերագույն դատարանը, միաժամանակ, անհրաժեշտ է գտնում փաստել, որ դիմելով Առաջին ատյանի դատարան, Հայցվորը խնդրել է հաստատված համարել Պայմանագրի անժամկետ բնույթը, անվավեր ճանաչել Պատասխանողի կողմից կայացված անհատական իրավական ակտը, իրեն վերականգնել աշխատանքում, հոգուտ իրեն գանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը, իսկ աշխատանքում չվերականգնելու դեպքում՝ միջին աշխատավարձի չափով հատուցումը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Առաջին ատյանի դատարանը ներկայացված հայցադիմումը համարել է չորս առանձին պահանջներից կազմված: Կայացված վճռի եզրափակիչ մասում հաստատված է համարվել կողմերի միջև կնքված աշխատանքային պայմանագրի անժամկետ բնույթը, Պատասխանողի կայացրած անհատական իրավական ակտը ճանաչվել է անվավեր, Հայցվորի օգտին գանձվել է հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի գումարը՝ սկսած 2021 թվականի հունվարի 01-ից մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը, ինչպես նաև նույն ժամկետով և նույն չափով հատուցում՝ աշխատանքում չվերականգնելու դիմաց: Մերժվել է նախկին աշխատանքում վերականգնելու «պահանջ»-ը:

Սույն որոշմամբ արդեն հայտնված իրավական դիրքորոշման հաշվառմամբ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ անկախ այն փաստից, որ Հայցվորը Առաջին ատյանի դատարան է ներկայացրել թվով չորս «պահանջ», Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր առանձին կետերով որոշում կայացնել պայմանագիրն անորոշ ժամկետով կնքված համարելու «պահանջ»-ը բավարարելու և աշխատանքում վերականգնելու «պահանջ»-ը մերժելու մասին: Ուստի, այս մասով թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի խախտում:

Մինևույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայցվորի օգտին գանձել է օրենսդրությամբ չնախատեսված չափով գումար՝ այն սահմանելով որպես հատուցում: Հետևաբար, այս մասով թույլ է տվել նյութական իրավունքի նորմի խախտում:

Նշվածների համատեքստում Գերագույն դատարանը հիմնավորված է համարում Առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանելու և գործը լրիվ ծավալով նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը:

Գերագույն դատարանը միաժամանակ փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, գործը նոր քննության ուղարկելով, ի թիվս այլնի, արձանագրել է նաև, որ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված իրավունքից գործատուն կարող է օգտվել երկու՝ հավասարաթեք եղանակով, այն է՝ կարգապահական վարույթի արդյունքում, որպես կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու, և առանց որևէ վարույթ իրականացնելու՝ աշխատանքային պայմանագիրը միակողմանի լուծելու տարբերակներով:

Դրան հակառակ, Գերագույն դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ, ինչպես նաև նախկինում արտահայտված իրավական

դիրքորոշումները, ևս մեկ անգամ արձանագրում է, որ աշխատանքային հարաբերությունների դադարեցումը չի կարող լինել կամայական, սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այդ իսկ պատճառով օրենսդրությամբ հստակ և սպառիչ թվարկված են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում հնարավոր է լուծել աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքով պայմանավորված հարաբերությունների կարգավորման պայմանագրային բնույթը միաժամանակ պահանջում է ոչ միայն իրավունքի իրացման, այլև պարտականության կատարման անհրաժեշտություն, և կողմերի, տվյալ դեպքում գործատուի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունքի իրացումը չպետք է պայմանավորված լինի նպատակահարմարությամբ կամ սուբյեկտիվ բնույթի այլ գործոնով, այլ պետք է հետապնդի արդար, իրավաբանորեն ամրագրված որոշակի նպատակ՝ աշխատանքի իրավունքի իրացման սահմանադրորեն կանխորոշված սկզբունքներին համապատասխան:

Գերագույն դատարանն ԸԻԴ/0399/02/20 քաղաքացիական գործով 2022 թվականի հունվարի 12-ի որոշմամբ ևս ընդգծել է հետևյալը. ...Ըստ այդմ, առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայանալու, այն է՝ կարգապահական խախտում թույլ տրված լինելու, հիմքով աշխատողին աշխատանքից ազատելը (գործատու-աշխատող հարաբերությունները կարգավորող հատուկ օրենքում այլ բան սահմանված չլինելու պարագայում) կարող է իրականացվել միայն որպես կարգապահական խախտման համար կիրառվող տույժ: Այսինքն, նման դեպքերում կարգապահական վարույթ իրականացնելը և դրա շրջանակներում օրենսդրությամբ ամրագրված կարգը պահպանելը պարտադիր է: Հակառակ բոլոր դեպքերում կայացված անհատական իրավական ակտը պետք է համարվի օրենքի պահանջների խախտումով կայացված:

Գերագույն դատարանը փաստում է, որ Պատասխանողի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 206-5 անհատական իրավական ակտը կայացվել է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի վկայակոչմամբ և առանց կարգապահական վարույթի վերաբերյալ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված ընթացակարգի պահպանման: Հետևաբար, գործի նոր քննության ընթացքում առանց հարգելի պատճառի աշխատանքի չներկայանալու փաստը Վերաքննիչ դատարանի պատճաբանությունների ներքո քննելու անհրաժեշտությունը բացակայում է:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական ակտերի բեկանման և փոփոխման հիմքերը սահմանված են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերն են՝

1/ նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը,

2/ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, որոնք ազդել են կամ կարող էին ազդել գործի ելքի վրա, հանգեցրել գործի սխալ լուծման:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի՝ «1. Նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1) չի կիրառել այն օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր.

2) կիրառել է այն օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր.

3) սխալ է մեկնաբանել օրենքը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

2. Նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման»:

Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը՝ ներկայացված վերաքննիչ բողոքի սահմաններում ըստ էության կայացրել է ճիշտ դատական ակտ, սակայն այն մասնակի սխալ է պատճառաբանել, հետևաբար անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վերանայվող դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Գերագույն դատարանի լիազորությունը և Վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 10-ի որոշումը՝ Գերագույն դատարանի պատճառաբանություններով, թողնել օրինական ուժի մեջ:

6. Գերագույն դատարանի դիրքորոշումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական ակտը թողնվում է օրինական ուժի մեջ, իսկ Հայցվորն ազատված է վճռաբեկ բողոք բերելու համար նախատեսված պետական տուրքի վճարման պարտավորությունից, Գերագույն դատարանը չի անդրադառնում դատական ծախսերի բաշխման հարցին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 256-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անուշ Աբրահամյանի ներկայացուցիչ Արկադի Հովհաննիսյանի բերած վճռաբեկ բողոքը մերժել: ԸԲԴ/0442/02/21 քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 10-ի որոշումը՝ սույն որոշման պատճառաբանություններով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՍՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՍՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ